**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու ավտոպահեստամասեր՝ ըստ կից ներկայացված գնման առարկայի բնութագրի (հավելված 1):

Սույն հրավերի ծածկագիրն է «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/6-14/17»

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ Կայք) միջոցով՝ մինչև հայտերի ներկայացման համար կայքում նշված վերջնաժամկետը:

Հայտերը կբացվեն Կայքի միջոցով՝ հայտերի բացման համար կայքում նշված օրվա նշված ժամին:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ Արամ Մկրտչյանը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով:

Հայտը ներառում է.

1. Մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը (հավելված 2),
2. Մասնակցի գնային առաջարկը (հավելված 3) /*օրինակելի ձևերը կցվում են*/:

*Գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:*
*Գնային առաջարկին կցվում է (Կայք է ներբեռնվում) մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթի արտատպված (սկանավորված) տարբերակը (ֆայլը), որում ներկայացվում է գնի առաջարկի հաշվարկ՝ բաղկացած ինքնարժեք և ավելացված արժեք ընդհանրական բաղադրիչներից:*

Գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հայտերը պետք է պատրաստել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից՝ գնման առարկայի բնութագիրը, կնքվելիք պայմանագրի նախագիծը (հավելված 4):

**ՀՀ կառավարության աշխատակազմ**

հեռ. 51-59-09
էլ. հասցեն՝ gnumner@gov.am